

նախկին մէջ ևս չարժու՜մ առաջ բերեց, որն արտայայտուեցաւ Եօրիկ արքեպիսկոպոսի հովտական թղթերում. դեցանով նա իւր հօտին կոչում է անում՝ զինքն ասպաշխարութեան և ազօթիւի Բացատրելով, որ ազգերի վեճակը անմիջապէս Աստուածային նախախնամութիւնից է կախուած, որը կառավարել թէ երկնցում և թէ երկրի վերայ, նա ասում է. «Եթէ Աստուած Աստուած է ոչ միայն անհատներ, այլ և ազգերի, եթէ ազգերն իրենց վարմունքի և քնաւորութեան համար պատասխանատու են Աստուծո առաջ, — այն ժամանակ մեղքերի համար պատիժ նոցա ստանում են այս կեանքում, որովհետեւ ազգերը անգր—դերեզմանեան կեանք չունին: Ուստի և անդիտական ժողովուրդը պէտք է ասպաշխարէ և քաւէ իւր մեղքերը, որպէս զի այդ հպարտ և հարստացած ազգը ստիպուած չլինի ասպաշարում կրկին անգամ ստորացումն ամենաւրայ:

— Անգլիայում սովորական եկեղեցական ժողով գումարուեց այս տարի Բրայտոն քաղաքում, Այդպիսի ժողովներ ամէն տարի են գումարում. ըստ որում ժողովատեղի են լինում, կարգով, այնպիսի քաղաքներ, որոնք տեղական —կրօնական կեանքի կենտրոն են կազմում:

Այսպիսի ժողովներն մասնակցում են բարձրաստիճան հոգևորականներ, պետական մարզիկ, պրոֆեսորներ, եկեղեցիների աւագ քահանաներ, հոգևոր հեղինակներ, երկրի եկեղեցական —կրօնական գործերով քիչ շատ հետաքրքրուողներ:

Եկեղեցական ժողովներն այսպիսի կազմը մեծ նշանակութիւն ունի երկրի կրօնական կեանքի համար, և թէպէտ նոցա սրտումները կանոնադրական ոչ մի ոյժ չունին, բայց սրպէս արտայայտութիւն հասարակաց կարծիքի —առանց ներդաշնակութեան չեն մնում երկրի եկեղեցական կրօնական կեանքի ուղղութեան համար:

Այս տարուայ Բրայտոնում գումարուած ժողովը մեծ յաջողութիւն ունեցաւ՝ թէ ժողովականների բաղմութեամբ և թէ մտածողութեան առաքիւնները արժանաւորութեամբ:

Ժողովի բացումից մի քանի օր առաջ հին Բրայտոնը կենդանութիւն ստացաւ, որովհետեւ ամէն կողմերից եկող գնացքները հոգևորական մարդկանցով լցուած էին զալիս, այնպէս որ երկաթուղու վարչութիւնը կարող էր վազաններում «հինգ հոգու տեղ» խօսքերը փոխարինել «հինգ հայրերի տեղ» խօսքերով:

Տեղական իշխանութիւնները միջոցներ ձեռք առին արժանաւոր հիւրերին պատուով ընդունելու համար: Նկատելի էր, որ եկեղեցական ժողովը մի կենդանի և կարևոր գործ էր, որը հետա-

քըցրում էր ոչ միայն քաղաքի բնակչութեանը, այլ և բոլորին:

Ըստ սովորականի ժողովը բացուեց աղօթքով՝ մի քանի եկեղեցիներում խառն բաղմութեան ներկայութեամբ ժամերգութիւն եղաւ: Մեծ բաղմութիւն կար այն եկեղեցում, ուր ժամատողը Լոնդոնի ճարտարախօս եպիսկոպոսն էր: Նորա քարոզը — Աստուծոյ արքայութիւնը խօսքի մէջ չէ, այլ ոյժի —բոլորի վերայ մեծ ազդեցութիւն թողեց:

Անգլիական եկեղեցւոյ պատմութեան վերայ մի հայեացք ձգելով՝ նա ցոյց տուեց, թէ ինչպէս սա բարձրանալով դարձի բերելով, ծաղկման բարձր շրջանին հասաւ: ձգեց պատկան իշխանութիւնը և մարդկութեան լուսաւորութեան և քրիստոնէութեան տարածման համար զօրեղ գործօններից մէկն եղաւ: Ինչու համար այդ եկեղեցին այն չէ, ինչ հարկաւոր էր որ լինէր — ի պատասխանի այդ հարցին նա ասաց, որ միութիւնը պակաս է, եկեղեցին չունի մի որոշ եկեղեցական ինքնազկաւարկութիւն, եկեղեցին որոշ չափով պետութեան կողմից ճշման է ենթարկուած: Այս պակաս կողմերը լրացուելուն պէս կարելի է յուսալ, որ եկեղեցին աւելի ու աւելի կճաղկի:

Ժողովի բացման միջոցին նախադահող եպիսկոպոսը յիշեց, որ եկեղեցւոյ մի քանի նշանաւոր առաջնորդները շատ ժամանակ չէ ինչ մեռել են, որ եկեղեցին մեծ կարելի ունի մարդկանց:

Ապա մի քանի շարադրութիւններ կարդացուեցան, որոնց մերնադրներն էին. «Վարելիութիւնները և վտանգները նոր դարում», «Ժողովուրդական կրթութիւնը և նորա պէտքերը», «Եկեղեցւոյ իշխանութիւնը», «Հոգևորականութեան նիւթական ապահովութիւնը» ևն: Եկեղեցւոյ միութեան համար խօսեց Լորդ Հալֆորտ, որ ասաց թէ եկեղեցւոյ միութեան դաշտավարը համակրողներն մեծ բաղմութիւն ունի:

ՀՐԷԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԱՆՅԵԱԼ ՀՐԷԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ: *

Հրէաների արտաքին քաղաքական դրութիւնը միւս ազգերի շարքի մէջ, անցեալ տարի, ոչ միայն չի լաւացել, այլ ընդհակառակը շատ վատացել է:

* Յօդուածի առաջին երկու պարբերութիւնները մեզ համար առանձին հետաքրքրական կողմ չունին, ուստի համառօտաբար ճոցա քովակցակութիւնն է տրուած:

Այսպէս, նոյն իսկ աղատ Անգլիայում սկսեցին զօրեղ ձայներ լսուել, որոնք կամենում են արգելել գաղթական հրէաների մուտքն իրենց երկիրը: Այդ նպատակով անգլիական լորդերից շատերը մի ընկերութիւն հիմնեցին «եզրաբար—անգլիացի» անուան ներքոյ: Այս ընկերութեան ներկայացուցիչներն արդէն ունկնդրութիւն են ունեցել մի քանի նախարարներէ մօտ, որոնց աշխատել են սպացուցանել, որ հրէայ գաղթականները Անգլիայում ցանկալի տարր չեն, որ նորա բնակուելով տեղական խեղճ բանուորներէ բնակած մօտերում, շատ նշանաւոր չափով բարձրացնում են բնակարանների գները: Մինչև անգամ «Եսրայէլի մեծերից» մի քանիք հրէայ գաղթականների առաջ դռները փակելու ձգտողներն հետ համաձայն էին:

Առյանդեան օվկիանոսի այն կողմում՝ Միտղեայ նահանգներումն էլ չարարազդ մի տարի էր այս հրէայ գաղթականների համար: Երբ անցեալ տարի լուր տարածուեց, թէ Ռումինեայում բնակուող հրէաներից շատերը որոշել են Ռէքելի գաղթել, Միտղեայ նահանգների կառավարութիւնը առանձին պատգամաւոր ուղարկեց Ռումինիա, որին յանձնարարուած էր տեղեկանալ՝ արդեօք հիմնաւոր է այդ լուրը, և ո՞վ է հրէաներին զբոսում գաղթելու,—այն նպատակով է հարկէ, որ գաղթականների նոր հոսանքն արգելուի:

Ֆրանսիայում ոչ միայն կաթոլիկական և պահպանողական, այլ նոյն իսկ հանրապետական լրագրիւններում յաճախ ձայներ էին լսուում, որ անհրաժեշտ է սահմանափակել հրէաների ընդունելութիւնը հպատակների թւում, ինչպէս և Ալժիրի հրէաներից խել ջաղարացիական իրաւունքները, որոնք արուած էին Իսահակ Աղօյլֆ Կրէմլէի նախարարութեան ժամանակ: Մտածմբ այդ ազդեցութեան ներքոյ Ալժիրում անկարգութիւններ առաջ եկան հրէաների դէմ, սակայն բաւական շուտով վերջացան Վալլիէ-Ռուսսոի նախարարութեան ձեռք տաւած եռանդուն և օրինական միջոցների շնորհիւ:

Աւելի լաւ չէ եղել գործը Գերմանիայում: Արդարադատութեան նախարար Շենշտեղա, հրէայ պատգամաւորներէ մէկին պատասխանելով, յայտնեց որ հակառակ տէրութեան օրէնքին դատարաններ և նոտարներ հրէաներից ընդունել չի կարելի, որովհետև հասարակութիւնը նոցա չի փոստահանում: Թէև հրէական ու մի քանի ազատամիտ լրագրիւններ այս առթիւ ազմուկ բարձրացրին, բայց և այնպէս գործը իւր կարգայն է գնում և հրէաները մեծ դժուարութեամբ պէտք է հասնեն հասարակական պաշտօններին: Բացի սորանից, արևելեան Պրուսիայում ժողովուրդը դեռ ոչ ոք

զրուած է հրէաների դէմ Կանկցում պատահած դէպքի պատճառով, ուր բանն այնտեղ հասաւ, որ մի սինագոգ քանդուեցաւ, հրէաների դէմ բռնութիւններ եղան, և այլն:

Աւստրիայում հակահրէականութիւնը աւելցնող տուելի և աւելի զօրեղանում է: Վիեննայի ջաղարացին խորհուրդը, որ ամբողջովին հակահրէականների ձեռքումն է, հրէաներին բուլտովին հեռացրեց հասարակական գործունէութիւնից: Նոյնպէս կարեց այն նպատար, որ քաղաքային տունը տալիս էր հրէական զբաղարանին: Վալիցիայում հակահրէականները աշխատում են «ընկերական խանութներ» բանալ այն նպատակով, որ այսուհետև հրէաներից ոչինչ չը գնեն: Սորա հետեւանքն այն եղաւ, որ Վալիցիայի հրէաները աւելի աղքատացան: շատերը սովորած թաղնում են իրենց տեղերն, ու գաղթում ուրիշ երկիրներ: Հրէաների դէմ եղած ատելութեան զօրեղանալուն Վալիցիայում, և Աւստրիայում ընդհանրապէս, շատ նպաստեց հասարակական կարծիքի զարթոնքը, որ հետեւանք էր Գիլլիքների մօտերումս վերջացած դատավարութեան: Այդպիսի ատելութեան գէպքեր նկատուեցին մինչև իսկ Աւստրիայում: Ռումինիայում հրէաների զբոսութիւնը մի փոքր թեթեւացել է համեմատած նախկին տարիների հետ: Ռումինիական կառավարութիւնը համոզուեցաւ կարծես, որ հրէաների մեծ քանակութեամբ Ռումինիայից գաղթելը ուրիշ երկիրներում մեծ անհանդուրժելի է յառաջ բերում, և նորա աշխատում են արգելել ռումինիական գաղթականների մուտքը: Ռուսի և հրէաներին հանդիսա թողեց, որի հետեւանքն այն եղաւ, որ նոցա գաղթն այստեղից այնպէս բաղմամբար չէր, ինչպէս նախկին տարիներում: Ինչ վերաբերում է Ռուսաստանին և եւրոպական այլ տէրութիւններին՝ հրէաների արտաքին իրաւական զբոսութիւնն այս տեղերում, անցեալ տարի, որ և է փոփոխութիւն չի կրել:

Այսպիսով, հրէաների արտաքին քաղաքական զբոսութեան վերաբերմամբ անցեալ տարին զրեթէ ոչ մի մշխթարական կողմ չի ներկայացնում: Եթէ այնուամենայնիւ «Գոմէլից» հրէական լրագրի հրապարակախօսը այդ տարին իբրև մի «օրհնեալ» տարի է համարում, ակնբեր է, որ նա ի նկատի ունի հրէաների զբոսութեան մի այլ կողմ՝ մէջ արտաքին, այլ ներքին:

Աւարդաբե, այս կողմից, հրէաների ազդեցին ոգու և ինքնազիտակցութեան զարթեցնող տեսակէտից, անցեալ հրէական տարին նշանաւոր տարի էր: Հրէաների մէջ, սինակականների ազդեցութեան ներքոյ, մի առանձին սէր երևաց ամումնադրելու այն՝ ինչ որ հրէական է: Այս նպատակով շատ տեղերում հրապարակական

ընթերցանութիւններ կազմուեցան: Շատ քաղաքներում հրէական ընթերցարան—գրադարաններ բացուեցան, ի միջի այլոց և Պետերբուրգում: Հրէական հասցեները պահելու համար վերանայում, համարողում և ֆիլագէլֆիլայում առանձին թանգարաններ հիմնուեցան:

Դր. Զինգէր առաւօնարկեց Նիւ-Յորքում մի առանձին հրէական համալսարան հիմնել, որ եղած գիտութիւններէ ծրագիրն ունենալով՝ աւելանային — եւրոպական համալսարաններէ և սկսնարիւններէ տարբերուելու է գլխաւորապէս նորանով, որ նորա ունեցողներն առաւել հրէաներէ պէտք է լինին, և այնտեղ ոչեւ է սովորեն հրէից լեզուն, գրականութիւնը, գիտութիւնը, պատմութիւնը, հնագիտութիւնը, գեղարուեստը—ամենաընդարձակ ծրագիրներով: Նոյն Դր. Զինգէրի գործակցութեամբ և նոյն տեղում նախաձեռնուած է հրատարակել անգլիերէն լեզուով «Հրէական Հանրագիտական Բառարան», որի առաջին հատորն արդէն լոյս է տեսել: Այս հրատարակութեան ընտղիւր պէտք է բովանդակութեան վերաբերեալ թանկագին նկարներով դորոշարուած լինի («Բարայէլի մեծերն» պատկերներ՝ հին կնիքներ, սկնադօշներ, հրէական բնակարաններ և այլն): Այս քիչ է. սկսադօղի գիտնական առաջնորդներ մէջ լուրջ միտք է յղացել հին հրէական լեզուն վերաստեղծելու, որն ուղում են ժողովրդական և խօսակցական դարձնել հրէական նոր սերունդներին, մասնաւոր Պաղեստին նոր գաղթողներին համար: Այդ միտքը մանրամասն քաջատրելու նպատակին յիշեալ «Գամելից» լրագրում անցեալ տարի նուիրուած էին Ի. Մ. Լեւինսոնի (№ № 4, 5, և 10, 30, 31, և 32) և Ի. Տօվիովի (№ № 14, 15, 16) մի քանի յօդուածները, որոնց բովանդակութիւնից երեւում է, որ այդ միտքը հրէայ հրապարակախօսներին այնքան էլ երեւակոյտական չի թուում, այլ շատ յարմարութիւններ ունի գործնական կեանքի մէջ իրականանալու համար:

Հրէաների ազգային ոգևորութիւնը անցեալ տարի չափամասիակուեցաւ միայն գիտական—տեսական գործունէութեամբ, այլ նորա ձգտեցին մի քանի գրական հետեւներն ևս հասնելու: Այս նպատակով Գերմանիայում հիմնուեց «Արեւելեան հրէաներին օժանդակող» նոր հրէական ընկերութիւն: Նոյն նպատակով փետրուար ամսին Օդեսայում հրէական (Ե.) համաժողով գումարուեց, որը պարապում էր Պաղեստինում եղած հրէական գաղթավայրերի դրութեան ուսումնասիրութեամբ (Տես. «Գամելից» 1901 թ. № № 40, 41, 42 և այլն):

Ննչպէս նկատուեցաւ, հրէաների ազգայնական զօրեղ ոգևորութեան հիմքը կազմում է գրե-

խաւորապէս սինականութիւնը: Հրէաների մէջ այս շարժումը, անցեալ տարի, շատ նշանաւոր չափով զօրեղացաւ: Սինականութեան քարոզիչները քաղաքներ և աւաններ լրջելով հրապարակական ընթերցանութիւններ էին սարքում, ազատ և բացարձակ քարոզում էին, որ հրէաները Պաղեստին գաղթեն, և հրէայ ունեցողներին առաջ դնում էին վերածնունդ հրէութեան ուշագրաւ պատկերներ: Քարոզութեան հետ միաժամանակ նորա իրանց հաւատակիցներէ մէջ նուէրներ էին ժողովում ի նպաստ Պաղեստինեան հրէայ գաղթականներին: Լոնդոնում գաղթավայրերի համար հիմնուած գրամատուլը մեծ յաջողութեամբ ծախեց իւր մեծաքանակ արժէթղթերը, որ պատրաստակամօրէն գնում էին թէ ուսանական և թէ արեւմտեան—եւրոպական հրէաները: Ննչպէս «Գամելից» հազորդում է, ներկայումս գրամատան հիմնական գրամագլուխը հասնում է մինչև 2,500,000 ռուբլու, և գրամատուլը շուտով կոխէ իւր գործողութիւնները: Բայց սինականութեան պատմութեան մէջ անցեալ տարուայ ընթացքում աչքի զարնոց գլխաւոր գէպն է այն ունեցողութիւնը, որ ունեցաւ Սուլթանի մօտ սինականներին պարագլուխ և գործադիր յանձնաժողովի նախագահ Դր. Հերցլը: Այս գէպը «Գամելից» լրագրի հրէայ աշխատակիցի խօսքերով միջոց տուեց հասկանալու այն առաքելութիւնների արժէքը, որոնք պնդում են, թէ Տաճկաստանը անվրատաճօրէն է վերաբերում սինականներին շարժմանը, և չի կամենում նոցա հետ որ և է յարաբերութեան մէջ մանել: Դր. Հերցլի, Լոնդոնում ասած, խօսքերին նայելով՝ սինականութեան համար այդ ունեցողութեան հետեւները շատ բարեկաշու է: «Jewish Chronicle» հանդիսի մի աշխատակից ասում է, որ եթէ Դր. Հերցլի միջոցաւ յաջողուի Պաղեստին գաղթելու ազատ իրաւունք ձեռք բերել, այն ժամանակ այդ ունեցողութեան օրը ամենամիառաւորը կլինի Իսրայէլի տարեգրութեանց մէջ՝ սկսած տաճարի աւերման օրից:

(Թարգմ. Церк. Вѣстникъ № 38.)

եղ. ս.